



V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր ՈՇ ՈՒ Մ

<<09>> հուլիսի 2012թ. N18-Ն

ԶԱՌ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝ Զառի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 28-ի N 40-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություն կատարելու, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 28-ի «Զառ գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի նախագծի հաստատման մասին» թիվ 40-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Ծախսային մասի

1.1.01 բաժին 01 խումբ 01 դաս նախահաշիվ 4251 հոդվածի / Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում / 4-րդ եռամսյակից 75.0 հազ. դրամ տեղափոխել 3-րդ եռամսյակ:

1.201 բաժին 01 խումբ 01 դաս նախահաշիվ 4251 հոդվածի / Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում / նվազեցնել 300.0 հազ. դրամ:

1.3.01 բաժին 01 խումբ 01 դաս նախահաշիվ 4232 հոդվածին / Համակարգչային ծառայություն / ավելացնել 300.0 հազ. դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝ կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

Ա. Բաղդիկյան՝

Ա. Դանիելյան՝

Ժ. Ղազարյան՝

Ա. Մովսիսյան՝

Փ. Մելիքյան՝

Ս. Շահումյան՝

Հ. Սմբատյան՝

Handwritten signatures of the council members.

Համայնքի ղեկավար՝ *Handwritten signature* Մ. Բարսիսանյան

